«ԿԱՊԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/8.1»

ք. Կապան «11» փետրվար 2020թ.

«Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ-ը, ի դեմս տնօրեն Կարեն Մելքոնյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ԳԱՐԻՄԵԴ»ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Գ.Մանուկյանի, որը գործում է «ԳԱՐԻՄԵԴ»ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Ձննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 8558000 (ութ միլիոն հինգ հարյուր հիսունութ հազար) ՀՀ դրամ:[1]Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

---

[17] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:[2]

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20][33]Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը

---

[20] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սպանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Եթե պայմանագրի գործողության ընթացքում Պատվիրատուի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջական խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ,

---

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.10 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.11 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.12 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:[4]

---

[24] *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումներ» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ	«ԳԱՐՐԻՄԵԴ»ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Կապան, Մ. Ստեփանյան13	Իրավ.հասցե՝ Երևան, Քանաքեռ ՀԷԿ, 8ա շենք, բն.18
Բանկ՝ «Ամերիաբանկ»ՓԲԸ	Գործ.հասցե՝ Կոտայքի մարզ, գ. Առինջ,Պարույր Սևակ,17փ.,5/1
Հ/Հ 1570026303980100	Հ/Հ 1510045551820100
ՀՎՀՀ 09420382	ՀՎՀՀ 00915935
Տնօրեն Կարեն Սերբոյան	Տնօրեն՝ Գ.Մանուկյան
----------	----------
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

դեպքում նաև նոր ապահովումներ» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Հավելված N 1
« 11 » փետրվար 2020 թ. կնքված
ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/8.1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը**	արտադրողի անվանումը և ծագման երկիրը**	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
1	332115 00/501	Maglumi CA 125 որոշման թեստ հավաքածու	SNIBE	Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված, Maglumi CA 125 որոշման թեստ հավաքածու (Maglumi CA 125) Մեթոդ՝Էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝ 50 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8՛C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50% , For In Vitro Diagnostic:	հատ	1864	186400	100	Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Մ.Ստեփանյան 13 «Կապանի բժշկական	Համաձայն պատվերի: Գնման ենթակա ապրանքների քանակները համարվում են առավելագույն մատակարարվող քանակն	Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվում մատակարարել ավելի շուտ/, մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուր
2	332115 00/502	Maglumi SCCA որոշման թեստ հավաքածու	SNIBE	Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված, Maglumi SCCA որոշման թեստ հավաքածու (Maglumi SCCA) Մեթոդ՝Էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝ 50 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8՛C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50% , For In Vitro Diagnostic:	հատ	4552	455200	100			

3	332115 00/503	Maglumi ՊՍԱ, PSA որոշման թեստ հավաքածու	SNIBE	Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված, Maglumi ՊՍԱ որոշման թեստ հավաքածու (Maglumi PSA)Մեթոդ՝Էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝50 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8՛C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50% , For In Vitro Diagnostic:	հատ	1550	620000	400	կենտրոն» ՓԲԸ	եր՝ որոնք ըստ կարիքի կարող են նվազել:	անգամ Պատվիրատուից պատվերը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացում մինչև 31.12.2020թ
4	332115 00/504	Maglumi Թիրեոտրոպ հորմոնի որոշման թեստ հավաքածու	SNIBE	Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված, Maglumi թիրեոտրոպ հորմոնի հայտնաբերման թեստ հավաքածու (Maglumi TSH) Մեթոդ՝Էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝ 50 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8՛C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50% , For In Vitro Diagnostic:	հատ	796	557200	700			
5	332115 00/505	Maglumi T4 ընդհանուր որոշման թեստ հավաքածու	SNIBE	Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված Maglumi T4 ընդհանուրի որոշման թեստ հավաքածու (Maglumi T4 total) Մեթոդ՝Էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝ 50 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50% , For In Vitro Diagnostic:	հատ	796	159200	200			
6	332115 00/506	Maglumi Ազատ T3 որոշման թեստ հավաքածու	SNIBE	Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված, Maglumi Ազատ T3 որոշման թեստ հավաքածու (Maglumi Free T3) Մեթոդ՝Էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝ 50 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50% , For In Vitro Diagnostic:	հատ	956	95600	100			

7	332115 00/507	Maglumi Ազատ T4 որոշման թեստ հավաքածու	SNIBE	Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված Maglumi Ազատ T4 որոշման թեստ հավաքածու (Maglumi Free T4) Մեթոդ՝Էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝ 50 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8′C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50% , For In Vitro Diagnostic:	հատ	956	286800	300			
8	332115 00/508	Maglumi T3 ընդհանուր որոշման թոստ հավաքածու	SNIBE	Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված, Maglumi T3 ընդհանուրի որոշման թեստ հավաքածու (Maglumi T3 total): Մեթոդ՝Էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝ 50 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50%: For In Vitro Diagnostic:	հատ	844	84400	100			
9	332115 00/577	Maglumi Անտի TG որոշման թեստ հավաքածու	SNIBE	Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված, Maglumi Անտի ՏԳ որոշման թեստ հավաքածու (Maglumi ATG) Մեթոդ՝Էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝ 50 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8′C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50% , For In Vitro Diagnostic:	հատ	1848	369600	200			
10	332115 00/510	Maglumi Անտի TPO որոշման թեստ հավաքածու	SNIBE	Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված, Maglumi Անտի ՏՊՈ որոշման թեստ հավաքածու (Maglumi Anti TPO) Մեթոդ՝Էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝ 50 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8′C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50% , For In Vitro Diagnostic:	հատ	1848	739200	400			

11	332115 00/511	Maglumi թիրիոգլոբուլին որոշման թեստ հավաքածու	SNIBE	Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված, Maglumi թիրիոգլոբուլին որոշման թեստ հավաքածու (Maglumi TG) Մեթոդ՝Էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝ 50 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8՝C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50% , For In Vitro Diagnostic:	հատ	1152	115200	100			
13	332115 00/513	Maglumi Ց Պեպտիդ որոշման թեստ հավաքածու	SNIBE	Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված, Maglumi Ց Պեպտիդ որոշման թեստ հավաքածու (Maglumi C Peptide) Մեթոդ՝Էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝ 50 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8՝C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50% , For In Vitro Diagnostic:	հատ	1974	197400	100			
14	332115 00/514	Maglumi ինսուլինի որոշման թեստ հավաքածու	SNIBE	Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված , Maglumi ինսուլինի որոշման թեստ հավաքածու (Maglumi Insulin)Մեթոդ՝Էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝ 50 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8՝C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50% , For In Vitro Diagnostic:	հատ	1844	184400	100			
15	332115 00/515	Maglumi Ալֆաֆետոպրոտեին որոշման թեստ հավաքածու	SNIBE	Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված, Maglumi Ալֆաֆետոպրոտեինի որոշման թեստ հավաքածու (Maglumi AFP) Մեթոդ՝Էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝ 50 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8՝C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50% , For In Vitro Diagnostic:	հատ	1384	138400	100			
16	332115 00/516	Maglumi Ազատ խորիոնիկ հոնադոտրոպին	SNIBE	Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված, Maglumi Ազատ խորիոնիկ հոնադոտրոպինի որոշման թեստ հավաքածու (Maglumi Free β HCG) Մեթոդ՝Էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝	հատ	2324	232400	100			

		որոշման թեստ հավաքածու		50 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8՛C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50% , For In Vitro Diagnostic:							
17	332115 00/517	Maglumi ՊԱՊՊ-Ա որոշման թեստ հավաքածու	SNIBE	Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված, Maglumi ՊԱՊՊ-Ա որոշման թեստ հավաքածու (Maglumi PAPP-A) Մեթոդ՝Էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝ 50 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8՛C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50% , For In Vitro Diagnostic:	հատ	2850	285000	100			
19	332115 00/519	Maglumi Պրոլակտին որոշման թեստ հավաքածու	SNIBE	Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված, Maglumi Պրոլակտինի որոշման թեստ հավաքածու (Maglumi Prolactin) Մեթոդ՝Էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝50 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8՛C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50% , For In Vitro Diagnostic:	հատ	1190	238000	200			
20	332115 00/520	Maglumi Էստրադիոլ որոշման թեստ հավաքածու	SNIBE	Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված, Maglumi Էստրադիոլ որոշման թեստ հավաքածու (Maglumi Estradiol) Մեթոդ՝Էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝ 50 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8՛C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50% , For In Vitro Diagnostic:	հատ	1264	126400	100			
22	332115 00/522	Maglumi պրոգեստերոն որոշման թեստ հավաքածու	SNIBE	Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված, Maglumi պրոգեստերոն որոշման թեստ հավաքածու (Maglumi Progesterone)Մեթոդ՝Էլեկտրոխեմիլումինեսցենտայ ին: Ֆորմատ՝ 50 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8՛C ջերմաստիճանում: Հանձնելու պահին	հատ	1264	252800	200			

				պիտանիության ժամկետի 50% , For In Vitro Diagnostic:							
23	332115 00/523	Maglumi Ազատ տեստոստերոն որոշման թեստ հավաքածու	SNIBE	Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված, Maglumi Ազատ տեստոստերոն որոշման թեստ հավաքածու (Maglumi Free Testosterone)Մեթոդ՝Էլեկտրոխեմիլումինեսցենտայի ն: Ֆորմատ՝ 50 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8′C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50% , For In Vitro Diagnostic:	հատ	1490	298000	200			
25	332115 00/525	Maglumi պարաթիրեոիդ հորմոնի որոշման թեստ հավաքածու	SNIBE	Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված, Maglumi պարաթիրեոիդ հորմոնի որոշման թեստ հավաքածու (Maglumi intact PTH) Մեթոդ՝Էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝ 50 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8′C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50% , For In Vitro Diagnostic:	հատ	2770	277000	100			
26	332115 00/529	Maglumi Վիտամին B12 որոշման թեստ հավաքածու	SNIBE	Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված, Maglumi Վիտամին B12 որոշման թեստ հավաքածու (Maglumi Vitamin B12)Մեթոդ՝Էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝ 50 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8′C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50% , For In Vitro Diagnostic:	հատ	3584	358400	100			
27	332115 00/530	Maglumi ֆերրիտինի որոշման թեստ հավաքածու	SNIBE	Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված, Maglumi ֆերրիտինի որոշման թեստ հավաքածու (Maglumi Ferritin) Մեթոդ՝Էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝	հատ	1188	118800	100			

				50 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8՛C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50% ,For In Vitro Diagnostic:							
28	332115 00/531	Maglumi ֆոլաթթու որոշման թեստ հավաքածու	SNIBE	Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված, Maglumi ֆոլաթթու որոշման թեստ հավաքածու (Maglumi FA) Մեթոդ՝Էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝ 50 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8՛C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50% , For In Vitro Diagnostic:	հատ	1392	139200	100			
29	332115 00/532	Maglumi տոկսոպլազմա IgM որոշման թեստ հավաքածու	SNIBE	Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված, Maglumi տոկսոպլազմա IgM որոշման թեստ հավաքածու (Maglumi Toxoplazma IgM) Մեթոդ՝Էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝ 50 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8՛C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50% , For In Vitro Diagnostic:	հատ	1664	166400	100			
30	332115 00/533	Maglumi կարմրախտ IgG որոշման թեստ հավաքածու	SNIBE	Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված, Maglumi կարմրախտ IgG որոշման թեստ հավաքածու (Maglumi Rubella IgG) Մեթոդ՝Էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝ 50 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8՛C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50% , For In Vitro Diagnostic:	հատ	1664	166400	100			
31	332115 00/534	Maglumi ցիտոմեգալովիրուս IgM որոշման թեստ հավաքածու	SNIBE	Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված, Maglumi ցիտոմեգալովիրուս IgM որոշման թեստ հավաքածու (Maglumi CMV IgM) Մեթոդ՝Էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝ 50 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8՛C ջերմաստիճանում: Հանձնելու	հատ	1664	166400	100			

				պահին պիտանիության ժամկետի 50% ,For In Vitro Diagnostic:							
32	332115 00/535	Maglumi Հերպես 1+2 IgM որոշման թեստ հավաքածու	SNIBE	Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված, Maglumi Հերպես 1+2 IgM որոշման թեստ հավաքածու (Maglumi Herpes 1+2 IgM) Մեթոդ՝Էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝ 50 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8՛C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50% , For In Vitro Diagnostic:	հատ	1664	166400	100			
34	332115 00/537	Maglumi աճի հորմոն որոշման թեստ հավաքածու	SNIBE	Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված, Maglumi աճի հորմոն որոշման թեստ հավաքածու (Maglumi GH) Մեթոդ՝Էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝ 50 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8՛C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50% , For In Vitro Diagnostic:	հատ	2090	209000	100			
35	332115 00/538	Maglumi կորտիզոլ որոշման թեստ հավաքածու	SNIBE	Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված, Maglumi կորտիզոլ որոշման թեստ հավաքածու (Maglumi Cortizol) Մեթոդ՝Էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝ 50 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8՛C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50% , For In Vitro Diagnostic:	հատ	1480	148000	100			

37	332115 00/540	Maglumi ԴՀԵԱ-Ս որոշման թեստ հավաքածու	SNIBE	Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված, Maglumi ԴՀԵԱ-Ս որոշման թեստ հավաքածու (Maglumi DHEA-S) Մեթոդ՝Էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝ 50 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8՛C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50% , For In Vitro Diagnostic:	հատ	2264	226400	100			
39	332115 00/542	Maglumi Վիտամին Դ որոշման թեստ հավաքածու	SNIBE	Maglumi 600 վերլուծիչի համար նախատեսված, Maglumi Վիտամին Դ որոշման թեստ հավաքածու (Maglumi 25-OH-Vitamin D) Մեթոդ՝Էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝ 50 թեստ/տուփ, կալիբրատոր, կոնտրոլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8՛C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50%, For In Vitro Diagnostic: Որակի սերտիֆիկատների առկայություն,Ֆիրմային նշանի առկայություն	հատ	3790	758000	200			
40	332115 00/543	Maglumi ստուգիչ լուծույթ Light Check	SNIBE	Maglumi ստուգիչ լուծույթ Light Check, նախատեսված maglumi 600 վերլուծիչով աշխատելու համար: Օրիգինալ; Ֆորմատ՝ 2մլ±10%; Պահպանման պայմանները՝ 2-8C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 50% , For In Vitro Diagnostic:Որակի սերտիֆիկատների առկայություն,Ֆիրմային նշանի առկայություն	հատ	12000	36000	3			

***Գնման ենթակա ապրանքների քանակները համարվում են առավելագույն մատակարարվող քանակներ՝ որոնք ըստ կարիքի կարող են նվազել:**

* ***Որակի սերտիֆիկատների առկայություն***

***Ծանոթություն** – Եթե գնման առարկաների հատկանիշները պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագրում կարդալ «կամ համարժեք» բառը: Համաձայն (Օրենքի Հոդված 13, Կետ 5)

* Գնման գործընթացը կազմակերպվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա :

***Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Մ. Ստեփանյան 13, «Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ հասցեով, աշխատանքային օրերին և աշխատանքային ժամերին՝ 09:00-17:00:

****Ապրանքների մատակարարումը Վաճառողի կողմից իրականացվում է Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո յուրաքանչյուր անգամ Գնորդից պատվերը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ Գնորդի կողմից պատվիրված քանակին և տեսակին համապատասխան:

* Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

** Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը » սյունակը: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ	«ԳԱՐՐԻՄԵԴ»ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Կապան, Մ. Ստեփանյան13	Իրավ.հասցե՝ Երևան, Քանաքեռ ՀԷԿ, 8ա շենք, բն.18
Բանկ՝ «Ամերիաբանկ»ՓԲԸ	Գործ.հասցե՝ Կոտայքի մարզ, գ. Առինջ,Դարույր Սևակ,17փ.,5/1
Հ/Հ 1570026303980100	Հ/Հ 1510045551820100
ՀՎՀՀ 09420382	ՀՎՀՀ 00915935
Տնօրեն Կարեն Մելքոնյան	Տնօրեն՝ Գ. Մանուկյան
----------	----------
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 2
«11 » փետրվար 2020թ. կնքված
ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/8.1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	33211500/501	Maglumi CA 125 որոշման թեստ հավաքածու		25%	25%	50%	50%	50%	75%	75%	75%	100%	100%	100%	100%
2	33211500/502	Maglumi SCCA որոշման թեստ հավաքածու													
3	33211500/503	Maglumi ՊՍԱ, PSA որոշման թեստ հավաքածու													
4	33211500/504	Maglumi Թիրեոտրոպ հորմոնի որոշման թեստ հավաքածու													
5	33211500/505	Maglumi T4 ընդհանուր որոշման թեստ հավաքածու													
6	33211500/506	Maglumi Ազատ T3 որոշման թեստ հավաքածու													
7	33211500/507	Maglumi Ազատ T4 որոշման թեստ հավաքածու													
8	33211500/508	Maglumi T3 ընդհանուր որոշման թոստ հավաքածու													
9	33211500/577	Maglumi Անտի TG որոշման թեստ հավաքածու													
10	33211500/510	Maglumi Անտի TPO որոշման թեստ հավաքածու													
11	33211500/511	Maglumi թիրիոգլոբուլին որոշման թեստ հավաքածու													
13	33211500/513	Maglumi Ց Պեպտիդ որոշման թեստ հավաքածու													
14	33211500/514	Maglumi ինսուլինի որոշման թեստ հավաքածու													
15	33211500/515	Maglumi Ալֆաֆետոպրոտեին որոշման թեստ հավաքածու													
16	33211500/516	Maglumi Ազատ խորիոնիկ հոնադոտրոպին որոշման թեստ հավաքածու													
17	33211500/517	Maglumi ՊԱՊՊ-Ա որոշման թեստ հավաքածու													
19	33211500/519	Maglumi Պրոլակտին որոշման թեստ հավաքածու													
20	33211500/520	Maglumi Էստրադիոլ որոշման թեստ հավաքածու													

22	33211500/522	Maglumi պրոգեստերոն որոշման թեստ հավաքածու															
23	33211500/523	Maglumi Զատ տեստոստերոն որոշման թեստ հավաքածու															
25	33211500/525	Maglumi պարաթիրեոիդ հորմոնի որոշման թեստ հավաքածու															
26	33211500/529	Maglumi Վիտամին B12 որոշման թեստ հավաքածու															
27	33211500/530	Maglumi ֆերրիտինի որոշման թեստ հավաքածու															
28	33211500/531	Maglumi ֆոլաթթու որոշման թեստ հավաքածու															
29	33211500/532	Maglumi տոկսոպլազմա IgM որոշման թեստ հավաքածու															
30	33211500/533	Maglumi կարմրախտ IgG որոշման թեստ հավաքածու															
31	33211500/534	Maglumi ցիտոմեգալովիրուս IgM որոշման թեստ հավաքածու															
32	33211500/535	Maglumi Հերպես 1+2 IgM որոշման թեստ հավաքածու															
34	33211500/537	Maglumi աճի հորմոն որոշման թեստ հավաքածու															
35	33211500/538	Maglumi կորտիզոլ որոշման թեստ հավաքածու															
37	33211500/540	Maglumi ԴՀԵԱ-Ս որոշման թեստ հավաքածու															
39	33211500/542	Maglumi Վիտամին Դ որոշման թեստ հավաքածու															
40	33211500/543	Maglumi ստուգիչ լուծույթ Light Check															

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են առողջական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ԳՈՐԾ.

«Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Կապան, Մ. Ասատրյան13
Բանկ՝ «Ամերիաբանկ»ՓԲԸ
Հ/Հ 15700263039801 00
ՀՎՀՀ 09420382
Տնօրեն՝ Կարեն Մելքոնյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«ԳԱՐԻՄԵԴ»ՍՊԸ
Իրավ.հասցե՝ Երևան, Քանաքեռ ՀԷԿ, 8ա շենք, բն.18
Գործ.հասցե՝ Կոտայքի մարզ, գ. Առինջ,Պարույր Սևակ,17փ.,5/1
Հ/Հ 1510045551820100
ՀՎՀՀ 00915935
Տնօրեն՝ Գ.Մանուկյան

/ստորագրություն/
Կ.Տ